ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ «ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ» ԳՐՔԻՆ ՄԷՋ

*Մեր մատենագրութեան հնագոյն շրջանին պատկանող երկերու կարգին Կորիւն Վարդապետի «Վարք Մաշտոցի»ն ալ կրած է ժամանակի ազդեցութիւնը եւ մեզի հասած է որոշ չափով խաթարուած վիճակի մէջ։ Բազում բանասէրներ փորձած են սրբագրութիւններ կատարել աստ եւ անդ։ Այս յօդուածով մենք ալ կը ներկայացնենք սրբագրութիւններու շարք մը, քաղելով մեր մատեանին լուսանցքներէն։ Սրբագրութիւններուն մէկ մասը կը պատկանի այլոց, միւս մասը մեզի։*

*Մեր գործածած օրինակներն են բուն Կորիւնի համար Երուսաղէմի* 1930*ի տպագրութիւնը. Փոքր Կորիւնի համար Վենետիկի* 1894*ի հրատարակութիւնը. իսկ Ագաթանգեղոսի համար* R. W. Thomson*ի* 1976*ի տպագրութիւնը։*

1. — *տող* 45–46. — *Բազմօք եւ այլ նայնպիսիք — բազումք։*

2. — *տող* 79. — *Բայց զի՞նչ ասիցեմք զզուգանացն — զզուգականացն։*

3. — *տող* 100. — *այլ զկնի եկելոցն — այլ եւ զկնի եկելոցն։*

4. — *տող* 204. — *եւ հաճեալ հրամանացն — եւ հաճեալ զհրամանացն պայման.* — Հմմտ. *Փոքր Կորիւն, էջ* 14։ *Ագաթանգեղոս, հատուած* 864։

5. — *տող* 208. — *միաւորութեան — միայնաւորութեան.* — Հմմտ. *տող* 847։

6. — *տող* 313. — *զնրբագոյնան՝ ըզկարճն — զնրբագոյնն եւ զլայնագոյնն, զկարճն։*

7. — *տող* 477. — *եւ առնոյր կարգել — եւ առնոյր հրաման կարգել.* — Հմմտ. *տող* 368։

8. — *տող* 500. — *յորոց եւ իմ անարժանիս ելեալ — յորոց եւ ոմանց արժանիս եղեալ։*

9. — *տող* 505. — *դառնայր յերկիրն Հայոց, պատմէր նմա — դառնայր յերկիրն Հայոց, եւ պատահեալ Սահակայ կաթողիկոսի Հայոց, պատմէր նմա։*

10. — *տող* 521. — *Անտիոխ — Անատոլիոս։*

11. — *տող* 620. — *յունայնվար — յունայնավարս։*

12. — *տող* 709. — *զարթուցանել — զուարթացուցանել.* — *Համաձայն Փոքր Կորիւնի* (*էջ* 35) *եւ Ագաթանգեղոսի* (*հատ.* 886)։

13. — *տող* 720. — *ահաւոր զօրութեամբն Քրիստոսի — ահաւոր զօրութեամբ փառացն Քրիստոսի։*

14. — *տող* 721. — *եւ բազում մուրհակս անիրաւութեան պատառեաց — Եւ բազում մուրհակս անիրաւագիրս անիրաւութեան պատառեաց։*

15. — *տող* 723. — *զակնկալ յուսոյն — զակնկալութիւն յուսոյն։*

16. — *տող* 724. — *Աստուծոյ փրկչին — Աստուծոյ եւ փրկչին։*

17. — *տող* 725. — *նօթճեաց — նըւաճեաց.* — *ըստ վկայութեան Փ. Կորիւնի եւ Ագաթանգեղոսի։*

18. — *տող* 727. — *Եւ անհամար գունդս վանականոց — Եւ անհամար գունդս գունդս վանականաց։*

19. — *տող* 744. — *պսակահաս — պսակահամբար։*

20. — *տող* 745–6. — *Անդ աղօթք աղերսալիք եւ խնդրուածք հաշտեցուցիչք — Անդ աղօթք աղերսալիք, եւ պաղատանք փարելիք, եւ խնդրուածք հաշտեցուցիչք։*

21. — *տող* 784. — *զի ընդ միմեանց բարբառսելն գիտելի է — զի ընդ միմեանց բարբառսիցեմք, եւ ոչ եթէ առ բարձրագոյն ոք Միածնին կամ Հոգւոյն Սրբոյ բարբառսելն գիտելի է.* — Հմմտ. *Ագաթանգեղոս, յօդուած* 852։

22. — *տող* 872. — *զամէն մնացեալն — զամենայն մնացեալն։*

digitised by A.R.A.R.@

# ԳՐԻԳՈՐ ՍՈՒՔԻԱՍԱՆՑ

(1300 ? – 1360 ?)

Ծնած է ԺԴ. դարու սկիզբը հաւանաբար։ Ապրած և գործած է Ղրիմի Սուրխաթ քաղաքը։ Իր գրչական գործունէութիւնը կ'ընդգրկէ քառորդ դարու շրջան մը (1332–1356)։ Ծանօթ երկերուն թիւը կը հասնի վեցի։

1. — Աւետարան, 1332, Սուրխաթ (Ղրիմ)։ Գրիչ՝ Գրիգոր Սուքիասանց։ Ստացող՝ Աւետիք րաբունի. — Ձեռ. Երեւանի, թիւ 7664։ Յիշտ. ԺԴ. Դարի, թիւ 313։

2. — Ժողովածու, 1339, Սուրխաթ ?։ Գրիչ և ստացող՝ Գրիգոր Սուքիասանց. — Ձեռ. Երեւանի, թիւ 10337։

3. — Աւետարան, Սուրխաթ ?։ Գրիչ՝ Գրիգոր Սուքիասանց։ Ստացող՝ Վարդան կրօնաւոր. — Ձեռ. Երեւանի, թիւ 7605։

4. — Աւետարան, 1344, Սուրխաթ։ Գրիչ և ստացող՝ Գրիգոր Սուքիասանց. — Ձեռ. Երեւանի, թիւ 7048։ Յիշտ. ԺԴ. Դարի, թիւ 424։

5. — Մանրուսմունք, 1352, Սուրխաթ։ Գրիչ՝ Գրիգոր Սուքիասանց. օրինակած է «ի վայելումն շնորհազարդ քահանայից». — Ձեռ. Երեւանի, թիւ 591։ Յիշտ. ԺԴ. Դարի, թիւ 483։

6. — Պատարագամատոյց, 1356, Ղրիմ։ Գրիչ՝ Գրիգոր Սուքիասանց. օրինակած է «ի վայելումն Տիրացու քահանայինս». — Ձեռ. Երեւանի, թիւ 3046։ Յիշտ. ԺԴ. Դարի, թիւ 506։

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

---

23. — տող 883. — չողաւորձև — չողաձև։

24. — տող 915. — մենամարտիկ — մենակռիւ մենամարտիկ։

25. — տող 920–21. — յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր որ աշխարհածնիւն՝ հայրենեացն — յանկարծահաս կենաց տապնջական ցանկալի ամենեցուն լինէր, որ աշխարհածնունդ հայրենեացն։

26. — տող [924]. — դարձեան — դարձան։

27. — տող 937. — մանրակատ — մանրակրկիտ. — Ըստ Ագաթանգեղոսի (յօդ. 898) և Փոքր Կորիւնի (էջ 48)։

28. — տող 939 — որրոցն Աստուծոյ — ընտրելոցն Աստուծոյ։

29. — տող 946–8. — Եւ Յազկերտի ամս քսան և մի, և յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ — Եւ Յազկերտի ամս քսան և մի, և Վռամայ ամս քսան և մի, և յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ. — Տես Սիոն, 1962, էջ 39–40։

30. — տող 949–50. — ի չորրորդում ամէն կրման արքայի մինչև յառաջին ամն — ի չորրորդում ամէն կրմանայ արքայի մինչև ցառաջին ամն։

digitised by A.R.A.R.@